

## Պարականոն Գրութիւններ

Արքուր Անդրանիկեան, *Այլընթաց*, Երեւան, հրատ. Զուարքնոց, 1993,  
*Տարաժամ*, Երեւան, Սփիւռք, 1995,  
*Մերկասառոյց*, Պէյրութ, Սիփան հրատ., 1996,  
*Ծողէջ*, Երեւան, Վաճ Արեան հրատ., 1998:

Հինգ գիրք ունի Արքուր Անդրանիկեան: Յիուածները՝ մեր տեսածներն են: Կ'ուզենք հոս միայն երեւոյթը նշել: Քննութիւնը, դիպուկի խօսքը, ընթերցումը, կու գան աւելի ուշ, տարբեր վայրի ու պայմաններու մէջ: Կ'ուզենք միայն նշել տարբերութիւնը այս բանաստեղծին: Հայաստանեան արտադրութեան մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ ան, միակը՝ հոն իր տեսակին մէջ, որովհետեւ չի հետեւիր անոր աւանդութեան: Զի խաղար ուտանաւորին խաղերը, չ'օտագործեր երբեք ժողովրդականն ու ժարգոնայինը: Կը պատկանի մքասնող բանաստեղծներու հարուտ աւանդութեան մը: Նման է երբեմն՝ ֆրանսական բանաստեղծութեան որոշ տեսակի մը, ըստնի՛ Ռյընէ Շարեան: Ինչպէս բոլոր մքասնող բանաստեղծներու պարագային, իր տողերը յարակարծօրէն՝ ողողուած են լոյսպ, գոնի վերջին երեք հատորներուն մէջ: Ակնախախիղ ընելու չափ ուժով լոյսով: Բնանիւթ չունի: Առաջին ակնարկով՝ չունի ո՛չ մէկ աղերս այժմէութեան հետ, կ'ուզեմ ըսել՝ երկրի կամ աշխարհի այժմէութեան հետ (չեմ ուզեր ըսել անշուշտ՝ բանաստեղծութեան, ընդհակառակը), այն մէկուն հետ՝ որ կը դառնայ առօրեայ, կը դառնայ աշխարհայեցք, կը դառնայ գաղափար, կը նչայ թերթերէն ու հեռատեսիլէն, հրապարակներէն ու բառուղիներէն աշխարհի:

Ամենատարրական երեւոյթներուն հետ տեսական լեզու գտած ըլլալու, կապ մը հասատած ըլլալու տպաւորութիւն մը կը ձգէ: Չ'ըսեր օրէնքը, երբեք, իր գրութեան, իր գրելուն: Շարժերը բուարկուած են, թուականներով: Ամէն օր գրուած, օրինակ՝ արքննալուն պէս: Գրելու յամառութեամբ մը, կուրութեամբ մը, երբեմն՝ ապշեցուցիչ: Առանց ձգելու որ օրուան գաղափարները կազմուին մտքին մէջ: Ուրեմն գաղափարներէ, նոյնիսկ՝ պատկերներէ առաջ հոսող բանաստեղծութիւն մը: Սիրահարութիւն մը բառերուն հանդէպ: Պայմանաւ որ հնչեն: Կեան էլ, նայուածքը, ներմին հոսանքները ուրիշ բանով չեն շինուած ի

## Մարկ Նշանեան

լոյսին, նայուածքին, արեւուն օգնականութիւնը փորձին-գրութեան մեջ: Հոս փորձ ու գրութիւն անզատ բաշելի են: Գրութեամբ է, որ կը կտտարուի անարեւ, հետեւարար՝ անարուեստ, փորձը մերձեց ումին:

Թէ որքանո՞վ ուզուած ու տիրապետուած է հոս այդ ծրագիրը, այդ մեկը՝ ուրիշ հարց է: Պէտք ունի՞ տիրապետուած ըլլալու, պիտի ըստի: Որոշ չափով՝ այո՛: Եթէ ոչ, շատ դիւրութեամբ կ'իյնանք եռ ոռմանքիկ երոթիքայի ասիմաններէն ներս, կամ արուեստով պաներ պատկերագրելու անուշիկ ծրագիրին մէջ, ինչ որ պէտք է խոստովանի՝ ամենէն ֆիշ հետաքրքրականն է, եւ ինչ որ ամէն պարագայի՝ իր դէմ պիտի երաւիրէր ժործ Պարայիեան պատկերաժանդ մոլոցը, ուղղուած “բանաստեղծութեան”: Դէմ, ընդհանրապէս: “Ստելութիւնը բանաստեղծութեան”: Այսինք նաև՝ բանաստեղծութիւնը իրբեւ ասելութիւն: